



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի մեր երիտասարդութիւնը իր ոյժերին
գործադրութիւն չէ գտնում.— Ներքին Տե-
ստութիւն. Թեմական դպրոցների ծրագիրը. Նա-
մակ Ղուբայից. Նամակ խմբագրին. Ներքին լու-
րեր.— ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիս-
ից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— Հե-
ռ-ՈՒԿԻՐՆԵՐ.— ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՁԻ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՈՅԺԵ-
ՐԻՆ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԵ ԳՏՆՈՒՄ

Ընդհանուր գտնադատ է լսվում մեր հա-
սարակութեան մէջ, որ մեր երիտասարդու-
թիւնը, որ աւարտել է իր ուսման ընթաց-
քը թէ միջնակարգ դպրոցներում և թէ
բարձրագոյն այլ և այլ դպրոցներում, ոչինչ
գործադրութիւն չէ գտնում կենքի մէջ
իր ոյժերի, իր հմտութիւնների համար:

Ինչ է սրա պատճառը: Մեր կարծիքով
պատճառներ շատ կան, և հաճախ պատ-
ճառներից գլխաւորները:

Մեր բոլոր միջնակարգ դպրոցները ընդ-
հանուր կրթողական ուղղութիւն ունենալի-
քով երիտասարդները այդ տեսակ դպրոցներում
իրանց ուսումը աւարտելուց յետոյ ունեն
երկու ճանապարհ՝ իրանց առջև՝ նրանք
կամ ուսուցիչներն պետք է դառնան, կամ
մտնեն պետական ծառայութեան մէջ: Ի
հարկէ չէ կարելի պահանջել որ միջնա-
կարգ դպրոցներում ուսուցանեին այլ և
այլ արհեստներ, այն ժամանակ այդ տե-
սակ դպրոցներ չէին լինի միջնակարգ, ընդ-
հանուր կրթողական ուղղութիւն ունեցող
դպրոցներ, այլ կը լինեին արհեստավարձ
դպրոցներ: Բայց կարելի է ցանկանալ, որ
բացի այլ և այլ միջնակարգ դպրոցներից
մեր երկրում լինեին և մասնագիտա-
կան, իրանց դիւրով թէկուզ միջնակարգ
ուսման ընթացքով դպրոցներ, որպէս զի
ընդհանուր միջնակարգ դպրոցներում սովոր-
ելուց յետոյ, երիտասարդները կարողանա-
յին մտնել այդ մասնագիտական զանազան
դպրոցներ, մի որ և է գործնական ար-
հեստ սովորելու համար: Այդպիսի դպրոց-
ներ, որոնց ի հարկէ ցանկալի է մեր երկ-
րում ունենալու, սրանք են. առևտրական,
գիւղատնտեսական տեխնիկական դպրոցներ
և այլն:

Այդ տեսակ մասնագիտական դպրոցներ,
բարձրագոյն դպրոցներ չը լինելով, այլ լի-
նելով թէկուզ մասնագիտական, ի-
րանց ուսման ընթացքով միջնակարգ դպ-
րոցներին հաւասար, կամ նրանցից փոքր
ինչ բարձր լինելով կը պատրաստէին աշ-
խատողներին, բուն գործնական
մարդկանց, քանի որ այդ տեսակ դպրոցնե-
րում երիտասարդները նոյն իսկ ուսման
ընթացքում աւելի գործնական աշխատանք-
ներով պէտք է պարապէին, քան թէ տե-
սական, թէօրիական դասեր լսէին:

Միջնակարգ ուսումը հիմք է ամեն երի-
տասարդին, նրա կրթութեան և ընդհանուր
զարգացման համար, միջնակարգ ուսումը
բաց է անում մարդու առջև ամեն տեսակ
ճանապարհներ կենքի մէջ. բայց միջնա-
կարգ ուսումից յետոյ մեր առջև թէկուզ
բացվում են բարձրագոյն դպրոցների դռնե-
րը, սակայն բարձրագոյն ուսումը, բացի
բժշկականութիւնից, չէ տալիս բուն գործ-
նական (պրակտիկային) հմտութիւններ:

Մեզ աշուղկեցաւ մեր բարձրագոյն մաս-
նագիտական դպրոցներում աւարտածներից
մի քանիսների հետ խօսելը: Նրանք թէկուզ
լաւ աւարտած էին իրանց ուսման ընթաց-
քը, այնու ամենայնիւ խոստովանում էին
որ իրանք թէկուզ թէօրիական ընդարձակ
հմտութիւններ ունեն, բայց գործնական
աշխատանքին պատրաստված չեն:

Վերջինսը մեր ինտելիգենցիային պատ-
կանող մի մասնագէտ երիտասարդին որ ու-
սել է բարձրագոյն դպրոցում երկրագոր-
ծութիւն, անցել է թէօրիական այդ առար-

կայի այլ և այլ մասերը, գիտէ գինեգոր-
ծութիւն, պանրագործութիւն, շերամապա-
հութիւն և այլն, և համեմատեմք նրան
մի գերմանացի կամ շվեյցարացի գործնա-
կան պանրագործի, գինեգործի, կամ Ֆրան-
սիացի ու իտալացի շերամապահի հետ,
որոնք օտար երկրից գալիս են մեր երկրը:
Մեր մասնագէտը գիտէ թէօրիական գույք
աւելի քան մասնագէտ օտարականը, բայց
այդ վերջինը բացի մասնագիտական տեսա-
կան ուղղութիւն ունենալուց, մի և նոյն
ժամանակ և մշակ է, նա իր դպրոցում
սովորում էր և վագեր տնկել և նրանց
լնամեր, և կովեր կթել, և անասունների
մասին ձմեռ ժամանակ ախտահարում խը-
նամբ տանել, և այլն: Մեզ յայտնի են արտա-
սահմանի բազմաթիւ մասնագիտական դպ-
րոցներ, որտեղ աշակերտները իրանց ուս-
ման ընթացքում ընտելանում են բուն
գործնական աշխատանքներին, կատարեալ
մշակութեան: Կենքը մանկելով նրանք ան-
միջապէս կարողանում են գործադրել ի-
րանց հմտութիւնները:

Մի ուրիշ պատճառ էլ կայ, որ մեր
մասնագէտները և բարձրագոյն ուսում
ստացած երիտասարդները գործադրութիւն
չեն գտնում իրանց ոյժերի համար հասա-
րակութեան մէջ. այդ պէս է որ մեր ին-
տելիգենցիան նախ քան գիտելու, ուսում
նախընտրելով թէ ինչ է հարկաւոր, ինչ է
անհրաժեշտ հասարակութեան, ժողովրդի
համար, — կամենում է մտցնել, իրագործել
անցկացնել հասարակութեան, ժողովրդի
մէջ այն, որ մեզ համար դեռ աւելորդ
բան է, եթէ այդպէս կարելի է ասել՝ շույ-
րութիւն է. իսկ անհրաժեշտը անգոր-
ծ է իրագործելու:

Ինչ կասէիք եթէ մի հմուտ կոշիկար,
իր արհեստը հիմնաւորապէս ուսումնասի-
րած, նուրբ արդիւնքներ պատրաստող ան-
ձին, զար մայրաքաղաքից, գետեղվէր մի
գիւղում — և փոխանակ գիւղացի տղա-
մարդկանց համար կոշուկ և ամուր կոշի-
կներ, իսկ գեղջկուհիների համար յարմար
և զիւմնացող ոտնամաններ պատրաստելու,
սկսէր գիւղացիների համար բարակ և
նուրբ բալի և սալօնական կոշիկներ կա-
րել: Պարզ բան է որ այդ տեսակ կոշիկա-
կար առնող չէր ունենայ գիւղում:

Գրեթէ այդպէս է վարվում մեր ամբողջ
ինտելիգենցիան. նա ուզում է առաջարկել
մեր ժողովրդին այն, ինչ որ դեռ ևս շույ-
րութիւն է, բայց չէ ուսումնասիրում մեր
անհրաժեշտ պէտքերը և զրանց համեմատ
չէ գործում ժողովրդի շրջանում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Թեմական դպրոցներին արդէն ուղարկված է
նոր կազմած և հաստատված ծրագիր՝ գործա-
դրութեան մէջ մտցնելու համար: Այդ ծրագրի
պատճենները ուղարկուած են մեր խմբագրութեան:
Հարկաւոր ենք համարում մի քանի, առ այժմ
համառօտ, տեղեկութիւններ տալ այդ մասին:
Համաձայն նոր ծրագրի թեմական դպրոցները
պէտք է ունենան վեց դասատու: Երեք նախա-
կրթարաններ, կամ ըստ նոր դպրոցական կանո-
նագրութեան, միւղասան դպրոցների ծրագրի
չէ մտցրած թեմական դպրոցների յատուկ ծրա-
գրի մէջ: Բացի դրանից, թեմական դպրոցների
I և II դասարանները նոյն ընթացքը և նոյն
ծրագիրը ունեն, ինչ որ, համաձայն նոր կանոնա-
գրութեան, ունեն երկդասեան դպրոցների IV
և V բաժանմունքները, որոնց մասին մի քանի
տեղեկութիւններ արդէն տրուած են «Մշակի»
այս տարվայ 86 համարում: Գրանցել երևում է
որ թէ կեղեցիկան ծխակաւ միղասան և երկ-
դասեան դպրոցների, թէ թեմական դպրոցների
ծրագիրները կազմողները ցանկութիւն են ունե-
ցել միատեսակ ուսման մտցնել հայոց դպ-

րոցների ուսումնական մասի մէջ, այնպէս որ թէ
Ղալարի, թէ Նուսու, թէ Ղարաբաղի Ենիք, Ե-
րեցվանի, Տաթև և այլ գիւղերի, թէ Ագուլիսի,
թէ Բագուի, թէ Գաւալուի, թէ Թեղաւի և ուրիշ
տեղերի հայոց թէ արական և թէ իգական ու-
սումնարանները պէտք է մի և նոյն կազմակեր-
պութիւնը, մի և նոյն բովանդակութիւնը և մի և
նոյն ծրագիրը ունենան, եթէ ճշգրտեամք գոր-
ծադրվեն նոր ծրագիրները: Այդպիսով միղասան
և երկդասեան դպրոցներից կարելի է մտնել թե-
մական դպրոցների առաջին կամ երկրորդ դա-
սարանները (գուցէ և առանց քննութեան), և որը
գէթ ըստ երկոյթի, մեծ հեշտութիւն կարող է
պատճառել այն աշակերտների համար, որոնք կը
կամենան մտնել թեմական դպրոցները, և որոնք
կը կազմեն ամենաշատը հայոց բոլոր ուսումնա-
րանների բոլոր աշակերտների 11/2—20/100:

Ինչ է հայոց տարական դպրոցի նպատակը,
ինչ են մեր ծխական-եկեղեցական դպրոցները,
ինչ պէտք է դուրս տանի աշակերտը կամ աշա-
կերտուհին դպրոցից — ահա այն հարցերը, որոնք
ծագում են այդ ծրագիրների կազմակերպութիւ-
նից:

Թողնելով այդ մասին խօսելը ուրիշ անգամե-
րի, դառնալով թեմական դպրոցների ծրագրի
բովանդակութեանը: Յիշեցնելով, որ թեմական դպ-
րոցների վեց դասարաններից I և II դասարանների
ծրագիրները նոյնն են, ինչ որ երկդասեան դպ-
րոցների IV և V բաժանմունքների ծրագիրը:

Կրօնի դասաւանդութիւնը սկսվում է առաջին
դասարանից և շարունակվում է մինչև վերջ, մինչև
վեցերորդ դասարանին: Կրօնի դասընթացի մէջ
մտցրված են, բացի հին և նոր կտակարաններից,
և Հայաստանից եկեղեցու վարչապետութիւնից,
և գիտութիւն ու գրոց, պատմութիւն Հայաստա-
նից եկեղեցու, աստվածաբանութիւն և աստուծոյց:
Պէտք է նկատել, որ աստվածաբան այն աստվա-
ններ, որոնք սկսվում են I դասարանից, անցն-
վում են առաջին երկրորդ դասարան-
ներում համառօտ, և բուն սեմինարիա-
կան դասարաններում կրկնվում են ա-
ւելի ընդարձակ կերպով: Կրօնի դասերի
թիւը վեց դասարաններում չաթաթական 27 է:

Հայոց լեզու: Քաղաքային եղիշէի և փարսե-
ցու մատենագրութիւնից, բանաստեղծութիւններ
և համառօտ քերականութիւն աշխարհիկ լեզուի
առաջին դասարանը: Երկրորդում՝ Աւետարան և
գրաբան քերականութեան սկիզբը: Երրորդ դասա-
րանը՝ արարելագիտութիւն մէջ մտցրած է և «Աշխարհա-
բան արարելագիտութեանը: Չորրորդից սկսվում է
մատենագրութեան տեսութիւնը և պատմութիւնը և
շարունակվում է մինչև վեցերորդ, այլ և գրաբան
շարագրութիւններ և ընտիր մատենագիտութիւն ըն-
թերցանութիւն: Շաթաթական դասերի թիւը հա-
յոց լեզուից բոլոր դասարաններում 24 է:

Ռուսաց լեզու: Գրութիւն, ընթերցանու-
թիւն, թարգմանութիւն հայերէնից ռուսերէն և
հակառակը՝ քերականութիւն: Երրորդ դասարա-
նում՝ զարուհի հոլովում և խոնարհում: Գրա-
ւոր գրադուհը չորրորդ դասարանը: Ստուգաբա-
նութիւն և ընթերցանութիւն ընտիր մատենա-
գիրների՝ հինգերորդ դասարանը: Եւ վեցերոր-
դում՝ համաձայնութիւն, ընթերցանութիւն ընտիր
մատենագրոց և գրաւոր գրադուհը: Շաթաթական
դասերի թիւը, 26 է:

Ֆրանսերէն լեզուն սկսվում է չորրորդ
դասարանից՝ ընթերցանութեամբ և վերջանում է
վեցերորդում՝ գրութեամբ և համաձայնութեամբ:
Շաթաթական 10 դաս:

Մաթեմատիկա: Բացի սովորական թաթա-
նութիւնից, երկրորդ դասարանը պիտի անցնել
չորրորդ հանրահաշիւ (algebra): Չորրորդում՝
վերջանում է հանրահաշիւը և սկսվում է երկ-
րաչափութիւնը և հարթաչափութիւնը (ըստ երե-
ւոյթի ընդարձակ): Հինգերորդում՝ երկրաչա-
փութիւն (մարմնաչափութիւն և տիեզերագրու-
թիւն): Մաթեմատիկա վեցերորդում չը կայ: Շա-
թաթական դասերի թիւը 17 է:

Բնական գիտութիւններից առաջին և
երկրորդ դասարաններում՝ կենդանի, բոյսը,
հանք բնական օրինակ օք և պատկե-
րօք. երրորդում՝ Թաթանութիւն. չորրորդում՝
բնախօսութիւն: Հինգերորդից սկսվում է ֆիզի-
կան և վերջանում է վեցերորդում: Շաթաթա-
կան դասերի թիւը 12 է:

Ընդհանուր պատմութիւն. սկսվում է
երրորդ դասարանից. երրորդում՝ հին, չորրոր-
դում՝ միջին, հինգերորդում՝ նոր և վեցերորդում՝
նորագոյն: Դասերի թիւը 9 է:

Հայոց պատմութիւն. I և II դասարա-
ններում անցնում է կենսագրական նկարագրու-
թիւններ Հայաստանի համառօտ աշխարհագրու-
թեան հետ միասին: Ընդարձակ հայոց պատմու-
թիւնը սկսվում է չորրորդից և վերջանում է
վեցերորդում, առանց Հայաստանի աշխարհա-
գրութեան: Դասերի թիւը 12 է:

Ռուսաց պատմութիւն. Առաջին դասա-
րանը պատմութիւնը անցնում է մինչև Մեծ
Պետրոս, երկրորդում՝ մինչև վերջ: Նոյն պատ-
մութիւնը հինգերորդում ընդարձակ անցնում է
մինչև Բոսնիայից, իսկ վեցերորդում՝ մինչև
վերջ: Դասերի թիւը 8 է:

Ընդհանուր աշխարհագրութիւն: Ըն-
կսվում է առաջինից (բնական և ուսումնական
աշխարհագրութիւն) և երկրորդում և երրորդում
վերջանում է քաղաքական աշխարհագրութիւնը:
Դասերի թիւը 8 է:

Ռուսաստանի աշխարհագրութիւն. Երկրորդ
դասարանին է անցնում, և գրած է
«ամբողջ»: Նոյնը անցնում է ընդարձակ կեր-
պով չորրորդում, որի համար էլի գրած է «ամ-
բողջ»: Դասերի թիւը 4 է:

Հոգեբանութիւն և տրամաբանութիւն. անցնում է
վեցերորդում՝ ամբողջ (համառօտ): Դասերի թիւը 4 է:

Չայնա գրութիւն. I և II դասարանը
անցնում է շարական ութ ծայրերը: Երրորդ
դասարանը՝ ռուսաց զարգացում ութ ծայ-
րից եղանակաց շարականի, մեղեդեաց և եկեղե-
ցական տաղից: III IV և V դասարաններում
խմբական երգեցողութիւն, ճաշից յետոյ: Դասերի
թիւը 9 է:

Նկարչութիւն: Առաջին, երկրորդ և եր-
րորդ դասարաններում ճաշից յետոյ: Դասերի թիւը
յայտնի չէ:

Վայելչագրութիւն, առաջին և երկրորդ
դասարաններում: Դասերի թիւը 2 է:

Այդ է թեմական դպրոցների ծրագիրը: Ինչպէս
երևում է, հարկաւոր կը լինի խրաբանչիւր դպ-
րանոցում մասնաւոր ծրագիր կազմել, ինչպէս
հարկն է, ուսուցչական խմբի համար:

ՆԱՄԱԿ ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 3-ին

Կարող եմ հետևել հաղորդել ընթերցողնե-
րին: Տօրոնի ծախվելու համար Մարտիկում եր-
կու հաղար պուշի չափ 8 և 9 ռուբլով և Բա-
թումի մէջ 4 ռուբլի ու կիսով, ևս գրել էի այն
տեղեկութիւններից քաղելով, ինչ որ խօսվում էր
այստեղ: Իմ գրածը ժողովրդի բերանից լսածս էր
և ոչ թէ երևակայական գին էի ստեղծել, որ-
պէս զի գրանով մոլորեցնում ընթերցողներին: Ե-
թէ ես նախանձանդիւր եմ տօրոնի մշակու-
թեամբ պարասողների շահերին, — դա դեռ պա-
կասութիւն չէ կարելի համարել, որովհետեւ ես
աշխատում եմ ընդհանուր, կամ մի ամբողջ հա-
սարակութեան օգտի և բարեբախտութեան հա-
մար:

Իմ գրածները «Մշակին» անհրաժեշտութիւն-
ներ էին և վաղ թէ ուշ հասկացող մարդու պար-
տականութիւնը պիտի լինի մամուլի միջոցով
յայտնել իր կարծիքը տօրոնի մասին: Ձերմ
պաշտպանութիւն է հարկաւոր գործին: Եթէ ես
թող պաշտպան էի այդ գործին, դա իմ կարողու-
թեանս չափաւորութիւնն էր. թող զօրեղը, ա-

Այդ դրոշմը պաշտպանութիւն ցոյց տայ տորոնի վերականգնեցնելու գործին: Եւ խօսողը ընդհանուր, հասարակութեան շահերի համար աչքի առաջ ունի դեռ իր սեպհական շահերը և այդ հէնց երևում է Բաթումի թղթակցի նամակից և երևացել է առաջին քայլում Բեթանեանցի գործերից: Ոչ ոք հակառակ չէ անհատների շահվելուն, — թէ նրանք իրանց գործերով շահում են ընդհանուր հասարակութեանը: Թող այդ ցոյց տան: Բորբորը մտքերը գեղեցիկ յոյսերով: — Եւ այդ գլորել մարդկանց մտաւորականութեան մէջ, — դա ինչին է նման: Իսկապէս իմ նամակներին սպասում էինք պատասխան պ. Բեթանեանցի կողմից, որպէս զի նա հանելուկը պարզէր, խոստովանէր ճշմարտութիւնը և նրա փոխարէն, պատասխանում են Բաթումից, որպէս թէ ես եմ մտորեցնում ընթերցողներին: Չարմանալին և այն է, որ ասում է պ. Ս. Մ. թէ «դեռ չէ կարելի եղբայրացնել, թէ տորոնը վերջնականապէս արտաքսել է հրապարակից արկղարին և ստացել է իր առաջնայ վարկը»: Եթէ պարոնը այդ հասկացել է իմ ոգևորված նամակից, — թող բարեհաճէր հաստատել: Իմ ամբողջ գրութիւնս հիմնված է եղել պ. Բեթանեանցի պատմածների և մասամբ դադարում տարածված լուրերի վրա, որոնք ոչինչ երևակայական բան չէ եղել:

Վերջացնելով նամակս հետեւեալ կառավարչին Լ. Մ. Դ. — ինչ: Եթէ նա գրում է լրագրին որ և է տեղեկութիւն, թող նախ և առաջ լաւ ծանօթանայ շրջապատող կեանքի, իրողութիւնների հետ, և այնուհետև գրի: Անճշտութիւններ են երևում նրա մէջ, որ ասում է արհեստը Ղուբայում թուրքերի ձեռքին է, այն ինչ դա կատարեալ սխալ է և արհեստաւորները մեծ մասամբ հայեր են, որպիսիք են հայ դերձակներ, հայ սրահագործներ (ВИШЕВНИКИ), հայ կոշիկարներ, հայ հաղաքան դերձակներ, և այլն: Թուրքեր կան կոշիկագործներ, և գլխարկ կարողներ (փափակալի) և մասամբ վառելիքայտ կտորողներ բերողներ, եթէ սրանց ևս արհեստաւորներ կարելի է ասել:

Լ. Մ. Դ. ասում է որ տեղիս դպրոցը ունի 5,000 ռուբլի դրամագումար և թող աշխատէին հոգալ դպրոցի համար յարմար շինութիւն պատրաստելու: Իր ժամանակին մեր գործիչները մասին կը հաղորդեն ձեռք:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐՈՒՆ

Թիֆլիս, 11 օգոստոսի

Մեր ջանքերի հակառակ՝ մեզ անհաւան կեղա այս տարվայ մեր որդիներ սերունդի արդիւնքի մասին ճիշդ աստիճանական թւեր ձեռք բերել: Մեր բարեկամներից մեզ հասած տեղեկութիւններից մենք տեսնում ենք որ ոչինչ արդիւնք ըստացողներ եղել են: Թէ և ոչ աւել քան 50/0: Ամենուհետև ստացած արդիւնքը տատանվում է 3—22 ֆ. բոժոժ մի մսխալ սերմից:

Մօտ տասը տարի է որ մեր սերմերը շարունակ տուել են 12—23 ֆ. բոժոժ մի մսխալին: Այս տարվայ համեմատաբար առած անալոգիկութիւնը առանց պատճառների չէ և այդ հնչողութեամբ կը անկանան գործին տեղեակ անհիմն:

Այդ պատճառները երկու կարգի են՝ արուեստական և բնական, թէ և այս վերջինները հէնց բնական են սպանել գիւղացիների ձեռքում ամենացելիւնը սերմից ամենատարող որդիք:

Ի. Մեզ հետ մրցել ուղղողներից ոմանք, մեր նոր իմացածին պէս, մեր գիւղում տոն տուն ման էին գալիս և փորձանակ իրատներ տալու շերամնոցներին տաքութեան աստիճանը պակսեցնելու, այնքան անապահ: Եթէ գտնվել որ իրանց ամենագէտ ձեռքներով, խորհուրդ էին տալիս գիւղացիներին դուրս անել որդիները (մեր սերմերից) հաշակելով նրանց միանգամայն հիւանդ և վարակված:

Թէ որքան անհիմն են եղել այդ պարոնների գիտութիւնը և արած անտեղի գուշակութիւնները թող տեսնվի հետևով օրինակից, որի ճշգրտութեան համար մենք երաշխաւոր ենք: Մեզ յայտնի մի աղքատ գիւղացու, որդիները (մեր սերմերից) այդ պարոնները եկել տեսել և նոյնպէս հիւանդ էին յայտնել և դէն անկու խորհուրդը տուել: Գիւղացու կնոջ լաց ու կոծը լսելով, դրացիները նրան հրաւիրում են գուշակութիւններին հաւատ չընծայել, այլ շարունակել որդիների խնամքը: Խեղճ կինը այդպէս էլ անում է և քաղում է մսխալին մօտ 22 ֆ. բոժոժ:

Մենք ամենայն իրաւունք ունենք ենթադրելու որ այդպիսի անցքեր ևս պատահած լինեն թէ մեր և թէ շրջակայ գիւղերում և եղբայրացնել որ մեզ հետ մրցել ուղղողների գործարած անապահ: (մեր սերմի որդիների համար վնասողութիւն և անհիմն գուշակութիւնների տարածելը — նշանակութիւն և աղբեցութիւն է ունեցել բերքի վրա:

Անցնենք բնական պատճառներին: II. Այս տարվայ եղանակի առանձնայատկութիւնը, ցուրտ դարունը արգելք եղաւ թիթեռներին իր ժամանակին բացվելուն: Այս հիման վրա սերմի թուխս դնելը ուշացաւ գիւղացիների մօտ:

III. Ցուրտ եղանակից յետոյ վաղ հասան տաք օրերը:

IV. Տաքութիւնը շերամնոցներում 22—23 R-էր: Այսպիսի շրջեր թուլացնում էին անշուշտ որդիներին և ոչ ժից դրոշմ՝ իսկ գիւղացիք մասամբ ոչ գիւրդութիւն են ունեցել և ոչ էլ կարողութիւն պակսեցնել շերամնոցներին տաքութեան այդ աստիճանը 17 R-ի:

Մէջ բերենք մեր մէկ բարեկամի մեզ գրածից այդ կտորը: «Մենք սպասում էինք այս տարի 27 մսխալ: Դրանցից 24 մսխալը ռաշպարի մօտ (պայմանով տուած) որ հանել էր ապրիլի 20-ին և որի արդիւնքն էր 5 պ. 5 ֆ., իսկ 3 մսխալը որ մեր տանն էինք պահում իրատների համաձայն (օրը 3—4 անգամ կերակրում, տերեւ կտրում, 2 օրէնը մի անգամ տակը մաքրում, սենեակի օդը մաքուր պահում և այլն) հանել էինք ապրիլի 28-ին: Այս կերպ մեր պահած 3 մսխալից մենք քաղեցինք միայն ***» 9 ֆ. բոժոժ՝ մինչդեռ մի և նոյն սենեակից մենք քաղել ենք միշտ մսխալին 20 ֆ. տուած:

Բայց ահա և բացատրութիւնը որ անում է մեր բարեկամը. «տաքութեան աստիճանը պատճառների վրա թաց բեկնետակ կախ անելով օրեկան մի քանի անգամ, հազիւ հասցնում էինք ***» 20⁰ R., թէ ոչ 22—23 R. էր»:

Այս օրինակը հաստատում է մեր վերև ասածները շրջերի վնասակար աղբեցութեան մասին: 8 օր առաջ 24 մսխալ հանած սերմը տուել է մսխալին 8 1/2 ֆ. բոժոժ, իսկ 8 օր յետ 3 մսխալ հանած և կանոնաւորապէս պահած սերմը տվել է մսխալին 3 ֆ. բոժոժ: Հարկ չը կայ նկատելու որ այդ 24 և 3 մսխալը մի տեսակ սերմից էին:

Մենք ասում ենք. ամենայն մէկ օր ուշ սերմի թուխս դրած լինելը այս տարի նշանակութիւն է ունեցել: Վաղ վրա հասած շրջերը աստիճան վնասել են համեմատաբար դեռահաս (ուշ դուրս եկած) որդիներին:

Միւս կողմից այն անձինք, որոնք որդիք առաջ են գցել, մի կերպով տերեւ ձեռք բերել՝ դրանք ազատվել են շրջերից և ամենից առաջ և ամենից շատ բոժոժ քաղել: Մինչև անգամ մեծ քանակութեամբ (15—25 մսխալ) պահողներն էլ լաւ արդիւնք են ունեցել այդպէս վարված լինելով: Գաղում ենք մեր մի բարեկամի նամակից՝ մեր խօսքերի հաստատող այս կտորը. «առհասարակ հին նախապետական տներում պահածները այս տարի լաւ են եղել. պատճառ օդը տաք չէ եղել, այդ տները լուսամուտներ չուներ, այլ մի մեծ հերթիկ մէջտեղից և մի քանի մանր դռնակներ (մանր լուսամուտներ) ուր օդը 18—19 R-ից չէր բարձրանում»:

Եթէ այս տարի, որ առանձին մի տարի էր, ամենքն էլ որ դնել 8—10 օր առաջ դրցած լինէին հին տերևով ****) մենք համոզված ենք որ ամենքն էլ կը ստանային առաջնայ

*) Մեր համոզմունքը այն է, որ դրանով այդ պարոնները միայն իրանց սեփական անունն են կտրել և խեղճ գիւղացիներին վնասել: Մենք լսել ենք որ մեր գիւղում, գուցէ և ուրիշ տեղ, պատահել են այնպիսիք, որոնք այդ պարոններին խօսքերին հաւատ ընծայելով — դուրս են անել իրանց որդիներին: ***) Նամակում չէ ասված Երբ: ****) Մեր բարեկամը որտեղ է գտել մեր խրատները մէջ 20 R: Մեզ մօտ 17 R-է ասված: ****) Կարկուտը որ այս տարի փչացրեց բնական տերեւ, կարելի է համարել 3-րդ բնական պատճառ: *****) Հին տերեւ ասելով մենք հասկանում ենք ոչ արևում չորացրած թիթեռնա տերեւ և միւս տարվայ համար չոր տեղ պահած: Այդ եղանակը գործ են անում եւրօպական գործնական շերամապահները: Երբ դարունը ցուրտ է լինում որդիներին առաջ են դրում այդպիսի տերևով, որի մեծ քանակութեամբ ունենալը աւելորդ է քանի որ որդիները սկզբում շատ քիչ են պահանջում: Մենք անում կարելի է գործադրել մի և նոյն միջոցը: Այդպիսի տերեւ որդիներ տալուց առաջ պէտք է թրջել, մանրացնել և ապա տալ:

10 տարիների նման արդիւնք՝ թէ շրջերից և թէ կարկուտից ազատված լինելով:

Այս ամենը այնքան պարզ է, գործին տեղեակ անձանց համար այնքան հասկանալի՝ որ մենք մի տող անգամ չէինք գրել մեր սերմերի ընտիր տեսակից և հիւանդութիւնից դուրի լինելը ապացուցանելու համար, եթէ չը գտնվէին անձինք, որոնք օդում քաղելով այս տարվայ յիշած անյաշող բերքից — չը համարձակէին մեզ և մեր սերմերի վրա զրպարտութիւններ և զրախօսութիւններ անելու: Մենք հերքեցինք այդ զրպարտութիւններ և զրախօսութիւնները (որովհետև սովորութիւն չուներ թող տալ ում և իցէ չօշակել մեր պատիւը անիրաւ կերպով) բացատրելով *) մի և նոյն ժամանակ և մեր շերամի գործում ունեցած չնչին դերը:

Յուսում ենք սակայն որ գտնվեցան մարդիկ ***) որոնք մեզ չը հասկացան կամ չը հասկանալ ձևացան: Երկու խօսք միայն պ. Մ. — ինչ:

I. Պ. X-ը ցանկանալով «Մշակի» ընթերցողներին ինչ որ է մոլորութիւնից դուրս բերել, մի կարգ ենթադրութիւններից յետոյ, հասնում է այս եղբայրացութեան: «Աւելի լաւ կը լինէր որ մեզանից ամեն մէկը աւելի շատ մտածէր իր առաքելութեան մասին, քան թէ աշխատէր «chercher des querelles»: Այս եղբայրացութեանը մենք բնաւ տեղիք չենք տուել՝ ուրեմն նա մեզ չէ վերաբերում: Մեր պատասխանը ***), մենք գրել ենք պարտաւորված՝ ինչպէս վերև յիշեցինք:

II. Պ. X իզուր է աշխատում մեզ մեղադրել ասելով... «տեղական պայմանների դէմ... պ. Վարդապետան ոչինչ չը կարողացաւ ձեռնարկել»: Մենք մեզ այդպիսի մի գործ կատարած լինելը երբեք չենք վերադրել: Մեր նոյն պատասխանում կայ, եթէ յիշում է պ. X, նաև այս կտորը. «մինչև այժմ նստած լինելով Մօսկվա շերամապահութեամբ անմիջական կերպով դադարվել մեզ անյարմար էինք համարում»:

Ի դէպ՝ այդ տեղական պայմանների մասին մեր կարծիքը այն է որ մեզանում 1) այդ տեղական պայմաններն ուրիշ գիւղացիների ձեռքով պահած առողջ սերմը տալիս է (տասը տարի է որ տուել է) հիանալի բերք: աւելի լաւ քան ստանում են նոյն իսկ Ֆրանսիայում: Կրկնում ենք՝ տալիս է երբ սակայն եղանակը տարօրինակ, առանձին տեսակի չէ լինում՝ ինչպիսին էր այս տարի:

III. Պ. X-ը բոլորովին իզուր է յայտնում իր ենթադրութիւնները իբր թէ Եւրօպայում (կամ Ֆրանսիայում) չը կայ անպայման ցելիւլեր, առողջ սերմ ծախսու: Ասում ենք իզուր՝ որովհետև եթէ չը կայ առողջ սերմ, ուրեմն և չը կար — ապա ուր կայ և ուր կան, և չը լինի թէ այս տասը տարիների ընթացքում մեր բերածները իզուր են եղել, և չը պէտք է բերէինք:

IV. Մեր սերմերի միմեանց յաջորդող տասը տարիների հիմանը բերքը վերադրել լոկ կոյր բաղդին՝ ինչպէս այդ անում է պ. X-ը, մեր կարծիքով ամենապակասը — սխալ է: Հէնց այդ աշողութեան պատճառով մենք հարկ չենք տեսնել ընկել տալու մեր սերմերը:

Մենք մեր կողմից չենք ընդունում ի հարկէ պ. X-ի վիճումը, որով նա մեզ դառնում է ուրիշ շատերի կարգում:

Փ. Վարդապետանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բնաբարբալայի և Անդրկովկասեան զինեզործները մի քանի ժամանակ առաջ դիմեցին Ֆինանսներին միջնորդութեան մի յայտարարութիւնով, որի մէջ ցոյց էին տալիս որ աւելի զի բարձրացնել և շատ ծանրութիւն է պատճառում երկրի տնտեսական զարգացմանը և առանձնապէս զինեզործութեանը և խմիչներ պատրաստելուն: Այդ յայտարարութեանը բովանդակութիւնը հաստատութիւն կողմից: Այժմ, ինչպէս հաղորդում է «Ноб. Вр.» լրագիրը, Ֆինանսների միջնորդը վճռեց յետաձգել յիշած ակցիդի աւելի բարձրացնել մինչև 1887 թի յուլիսի մէկը յիշեալ տեղերում:

«Новое Время» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Ժողովրդական լուսաւորութեան միջնորդ»:

*) «Մշակ» № 81:
**) «Մշակ» № 87-ի մէջ պ. X-ը:
***) «Մշակ» № 81:
1) Աղուիսի շրջակայքում:

տրութեան կողմից իրաւունք է տրված հայոց Մարդասիրական ընկերութեանը բանալու Բագուի մէջ սկզբնական դպրոցը:

Վովկասի նաւթային հարցը ուսումնասիրելու համար Ֆրանսիայից գալիս է մեր երկիրը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, սենատոր Դից-Մանէն:

Մեզ գրում են ՍԱՂԱՆ գիւղից հետեւեալ օգոստոսի 30-ից: «Վերջին օրերս յաճախ անձեռն տեղում այստեղ, որ մասամբ վնասել է խաղողի այգիներին: Գինին այս տարի շատ առատ կը լինի, բայց անձրևների պատճառով՝ լաւութեամբ պակաս կը լինի անցեալ տարւանից: Այստեղի գինին Շամախու լաւ գինիների շարքումն է: Հասցը սարօտ տեղերում աշող չէ, իսկ տափարակի վրա առատ հունձ է եղել»:

ՇԱՄԱՍԻՈՒՅ մեզ գրում են օգոստոսի 31-ից հետեւեալ: «Օդը բարեխառն է, ցերեկով լաւ տաք օրեր են պատահում: Առուուորը այստեղ ընկած է: Ամառվայ համար այստեղ եկածները արդէն ցրվում են: Երեկ ամառանոցից վերադարձաւ կօզակների գունդը»:

ՇԱՄԱՍԻՈՒՅ մեզ հաղորդում են որ հայոց օրիորդաց դպրոցի համար ուսուցիչներն արդէն վարձված են: Ընդունելութիւնը կը լինի մի քանի օրից յետոյ:

«Մշակի» անցեալ համարում ընթերցողը կարդացած կը լինի ԵՐԵՒԱՆԻ քաղաքային վարչութիւնից մեզ ուղարկած հերքումը, որ ստորագրել է վարչութեան անդամներից միւս: Այդ առիթով մենք չենք կարող չը խնդրել որ ամեն մի նամակի, կամ թղթակցութեան պատճառով հերքում գրող քաղաքային վարչութիւնները, կամ այլ հիմնարկութիւնները բարեհաճեն որքան հնար է կարճ կերպով գրել իրանց այդ հերքումները: Մեր լրագիրը այնպիսի մեծ թիւք չէ, որ իւրաքանչիւր հերքմանը նուիրէինք երեք, չորս կօշմ տեղ:

ԱՇՏԱՐԱԿԻՑ մեզ գրում են: «Մինչև այժմ մեզանում գողութիւններ և չարագործութիւններ շատ էին պատահում, բայց այժմ, շնորհիւ գաւառագետի օգնական Ալեքսանդր Մէլիք-Աղամախանի եռանդուն գործունեութեան, կատարեալ հանգստութիւն է տրուում մեզանում: Այն օրից երբ պարոն Մէլիք-Աղամախան սկսել է իր պաշտօնը վարելու, արդէն նա բռնել է տուել 9 հօգի մարդապան առաւակներին, որոնցից միւսը նշանաւոր աւաղակ էր»:

ԲԱԳՈՒՈՒՅ մեզ գրում են որ սեպտեմբերի 7-ին հայ դերասան Սարգսիւսն տուեց այդ քաղաքում իր երկրորդ ներկայացումն Տաղիւի թատրոնում: Խաղացվեցաւ «Սէլը և արդարութիւնը» դոհ են պահանջում պիէտան, հեղինակութիւն իրան պ. Սարգսիւսանցի: Թղթակցին ասում է որ ներկայացումն ընդհանրապէս լաւ անցաւ և հասարակութիւնը վարձատրեց խաղացողներին, մասնաւոր իրան Սարգսիւսանցին՝ ոգևորված ծափահարութիւններով: Սարգսիւսանցին ընծայվեցաւ և մի ծաղկեայ փունջ:

ԲԱԳՈՒՈՒՅ մեզ գրում են: «Մարդասիրական ընկերութեան երկրասեան երկսեռ և Շամախու թաղի միջնորդ, նոյնպէս երկսեռ ուսումնարանների նորակազմ հոգաբարձրութիւնը, նախադասութեամբ հայր Սարգի Միքայելեանի, կարծիք է արդէն ուսուցչական խումբ: Մարդասիրական ընկերութեան շինութեան մէջ ուսումնարանների տեսուչ նշանակվել է նախկին ուսուցիչ պ. Ա. Գալստեանց: Մինչև այժմ այդ ուսումնարանները մտնող խնդրատու աշակերտների թիւը հասնում է 180-ի, և ինչպէս երևում է այդ թիւը կը կըրկնապատկի մինչև սեպտեմբերի կէսը: Քննութիւնները պիտի սկսվեն սեպտեմբերի 4-ին, իսկ կանոնաւոր ուսումը ամսին 10-ին»:

Մեզ հաղորդում են, որ Բագուի բնական ուսումնարանի աշակերտների ընդունելութիւնը և հարցաքննութիւնները վերջացան օգոստոսի 28-ին: Միայն 40 աշակերտ 120 խնդրատուներից են ընդունվել, տեղի պակասութեան պատճառով: Բագուի աւելի քան 70 հազար բնակիչների հա-

ըն յաջորդեցին այդ ճառին: Անմիջապէս հեռագիր ուղարկվեցաւ թագաւորին:

— Ընդունից հաղորդում են, որ երկրի զանազան կողմերում կազմում են բազմաթիւ ստորագրութիւններով խնդրագրեր Սալըսըբրի անունով, որոնց մէջ պահանջում են կառավարութիւնից կտրական և եռանդուն քաղաքականութեան հետեւ Արեւելքի գործերի վերաբերութեամբ:

— Հեռագիրը արդէն լուր բերեց, որ համայնքների ժողովը երկրորդ ընթերցանութեամբ մերժեց Պարնելի հոգային բիլլը: Այդպիսով ուրիշն իրանդիայի համար պակասեցաւ և այն փոքրիկ յոյսը, որին սպասում էին շատերը, և որով կարելի կը լինէր մի փոքր թեթեւացնել իրանդիայի կապալաւորների դրութիւնը և վերջ տալ այժմ այնտեղ տեղի ունեցող խառնակութիւններին, սպասութիւններին և հալածանքներին: Այդպիսով, Սալըսըբրի միջնորդութեան դրութեան ժամանակ, իրանդական խնդիրը քանի զնայ պէտք է աւելի խճճի:

— Բրիտանից գրում են, որ պղնձի գործարաններում բանող 500 բանուորներ գործադուլ արեցին, պահանջելով, որ աւելացվի իրանց վարձը:

— Զիլիպոյից հաղորդում են, որ այնտեղ օգոստոսի 7-ին տեղի ունեցաւ իրանդական միութեան անդամների ժողովը: Ժողովը ի միջի այլոց վճռեց, բոլոր միջոցներով արգելել անգլիական ապրանքի առևտուրին և տարածվելուն, զթշնամու ամինազգայուն տեղին հարուածելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի հայոց լրագիրներում կարդում ենք հետևեալ լուրը: «Ի Պոլսե գիւղ այս օրերս հայ և յոյն եկեղեցիներու զանգակներն աղմուկ կուտային. ժողովուրդը յուզված կը դիմէր, կարծելով թէ մեծ հրդեհ կայ: Բայց փոխանակ հրդեհի ուրիշ ցաւով դէպք մը կար: Անդ օգափոխութեան գնացող հայ ընտանեաց մը ութ տարեկան աղջիկ մը ջրհեղջ (սառնիճ) ին մէջ կիյնայ. խեղճ աղջիկը խեղդելով փտանդի ենթակայ էր, թէպէտ ամեն ազգէ և կրօնքէ արք և կանաք, ծերը և մանկունքը պաշարած էին Վ. Պ. Էֆէնտի տունը, բայց այդ ամբողջ ամբողջ ուրիշ միջոց չէր խորհէր փոքրիկ աղջիկն ազատելու, բացի սուրբերն յօգնութիւն կոչելն: Զրչեղջին շուրջ կը բոլորէին արտասովելով: Բարեբաղդաբար այդ պահուն յոյն երիտասարդ մը, Տիմիթրաքի էֆէնտի, որ կերթար որսի, անցնելով անտի, կիմանայ եղելութիւնը և անմիջապէս կը դիմէ արկածին տունը և բարակ պարան մը կապելով մէջքը, կիծէ, ջրհեղջին մէջ և կազատէ փոքրիկ աղջիկն: Եթէ մի քանի վայրկեան ևս ուշանար Տիմիթրաքի էֆէնտին, արդէն փտանդն հասած պիտի լինէր: Աղջկայ ծնողքն և բոլոր թողեցիք շնորհապարտ կը մնան արիասիրտ յոյն երիտասարդին:»

Ներկայ թաւականի հոկտեմբեր ամսին Համբուրգում տեղի կունենայ ճարտարագիտների ժողով:

Վիլնայում, օգոստոսի 25-ին, առաւօտ վաղ, մի հրէայ, խայիմ-Միշկել Արօնովիչ, նաւթ անելով ուստաց մայր-եկեղեցու գոմերի վրա, փորձում էր կրակ տալ եկեղեցին: Փողոցով անցնողները այդ տեսնաւ, և հրէան չը կարողացաւ հասնել իր նպատակին: Ենթադրում են որ նա խեղճնոր է: Ասում են, որ այդ կապ ունի և այն բանի հետ, որ մի օր առաջ նոյն եկեղեցում մկրտեցին մի հրէային:...

Անցեալ տարի, ինչպէս հաղորդում է «Kurjer Warszawski» լրագիրը, լեհական թագաւորութեան բոլոր բանտերի մէջ եղած երկու սեռի բանտարկեալների թիւը հասնում էր 792,933-ի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՅՅԻԱ, 10 սեպտեմբերի: Կարալիով և Բոգոլիով այսօր կը գնան ռուսաց հիւպատոսարանը բացատրութիւններ ստանալու Ռուսաստանի մերժումի պատճառով, որով մերժված է բուլղարական կառավարութեան երկի՝ ռուսաց յայտարարին տուած պատասխանի: Ընդունելով: Այդ յայտարարի մէջ պահանջվում է յետագիւ պետական յեղափոխութեան մէջ միջադրվողների դատաստանը: Բուլղարական յայտարարի մէջ արտայայտված էր ցաւակցութիւն, որ Ռուսաստանը ձեռնկերպել է իր պահանջը, հիմնվելով միմային իր սիպական տեղեկութիւնների վրա. մի և նոյն ժամանակ ասված էր, որ ռուսաց յայտարարը կարող է մտքերի մէջ անհանգստութիւն յարուցանել, և վերջապէս, վերջումը ասված էր, որ յիշեալ անձանց դատարանը չի սկսվի բարձուն կատարարի գալուց առաջ: Դիպլոմատիկան շրջաններում յոյս ունեն, որ բարձուն կատարար կը բարւոքի երկրի դրութիւնը: Հոկտեմբերի 10-ի (նոր տ.) ազգային մեծ ժողովի համար ընտրութիւնների հրապարակ հրամանագիրը ստորագրված է: Կառավարութիւնը վճռեց վերացնել պաշարման դրութիւնը:

ԼՕՆԴՈՆ, 10 սեպտեմբերի: Համայնքների ժողովը, 297 ձայների մեծամասնութեամբ ընդգէմ 202-ի, երկրորդ ընթերցանութեան մէջ, մերժեց Պարնելի հոգային բիլլը:

ՕԴԵՍՍԱ, 11 սեպտեմբերի: Ունգարիայում խոլերայի երեւալու պատճառով, օրերումս Օդէսայում կարանտին դրուեցաւ այն նաւերի համար, որոնք գալիս են Դունայի նաւահանգստներից:

ԲՈՒԿԱ-ՊԵՏԵ, 11 սեպտեմբերի: Ասիական խոլերայի այստեղ գոյութիւն ունենալը հաստատված է այժմ պաշտօնապէս. սակայն մեռնողները չափ չեն. երկու օրուայ մէջ 57 հիւանդացողներից մեռան միայն 15 հոգի:

ՍՅՅԻԱ, 11 սեպտեմբերի: Նեկիլուզի պահանջի համեմատ, բուլղարական կառավարութիւնը ուղղեց իր պատասխան-յայտարարի այն կէտը, որը վերաբերում է յեղափոխութեան մասնակցողների դատարանին, որից յետոյ Նեկիլուզով ընդունեց յայտարարը:

ՍԻՄԲԱ (Հնդկաստանում), 11 սեպտեմբերի: Այստեղի կառավարութիւնը չէ ստացել ոչինչ այնպիսի տեղեկութիւն, որը հաստատէր աղանջների և բաղախանջների մէջ ծագած պատերազմական գործողութիւնների լուրը:

ԼՕՆԴՈՆ, 11 սեպտեմբերի: Երէկ համայնքների ժողովում, բուլղարական գործերի ծանր դրութեան առթիւ, կառավարութիւնը յայտնեց, որ այդ գործերը կարող են կրիտիկային ուղղութիւն ստանալ. բայց և այնպէս, բուլղարական անցեալ ճգնաժամի բարեյաջող վախճանը յոյս է տալիս կառավարութեանը, որ այս դժուարութիւններն էլ կանցնեն:

ՎԱՐՇԱՎԱ, 12 սեպտեմբերի: Աւստրիական սահմանի վրայով Ռուսաստան եկողներից պահանջվում է հաստատութիւն, որ նրանք չեն կացել այն տեղերում, որոնք վարակված են խոլերայով:

ՎԻԵՆԱ, 12 սեպտեմբերի: Բարձուն կատարար սեպտեմբերի 10-ին ուղևորվեց Վիեննայից դէպի Սօֆիա, որտեղ սեպտեմբերի 12-ին ընդունեց իր պաշտօնը:

Կ. ՊՕԼԻՍ, 12 սեպտեմբերի: Սուլթանը երէկ երկրորդ անգամ ընդունեց անգլիական պրինցներին հանդիսաւոր կերպով: Տեսակցութիւնը տեղեւ մօտ մի ժամ Սուլթանը շնորհեց Էդիթբուրգեան:

հերցոգին արմաներով զարդարված «Օսմանիէ» պատանշանի աստղը, իսկ պրինց Գէորգին նոյն պատանշանը կօմանդորական աստիճանի:

ՍՅՅԻԱ, 12 սեպտեմբերի: Պաշարման դրութիւնը կը վերացվի ընտրութիւններից 10 օր առաջ, իսկ իրանք ընտրութիւնները նշանակված են 28-ին սեպտեմբերի: Այդ միջոցով կառավարութիւնը կամենում է առաջն առնել անկարգութիւններին, որոնք կարող էին ծագել այն դէպքում, եթէ պաշարման դրութիւնը անյապաղ վերացվէր, քանի որ ընտրութիւնների համար պատրաստութիւնները սկսվելու են արդէն վաղուանից:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ռուսացի, որ ունի «Свидѣтельство о званіи учителя городского приходскаго начальнаго училища», վկայականը, կամենում է պաշտօն ունենալ հայոց դպրոցներում ռուսերէն լեզուով: Պայմանների մասին դիմել Ростове на-Дону, Мкртчя Худавердову. 1—2

ԱՉԳԻ ՀԻՒԱՆԳԻՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՂՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԲԺԻՇԿ ԲԵՅԻՒ ՄՕՏ ՎԵՐԱՆՈՐԴՎԱԾ Է: Ստորագրեալնայա փողոց տ. № 17: Ամենայն օր, առաւօտեան 9—10 ժամը:

1—4

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՍԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորեքշաբթի, սեպտեմբերի 17-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բենօին, նախկին Արծւրունի գալիւհեւում, № 103. 2—2

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ՊԱՐՅԻԻՄԸՐԻ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Ֆաբրիկայից
Որ արժանացրած է հղել բազմաթիւ մեդալների համաշխարհային ցուցահանդէսներում, կարելի է ստանալ բոլոր ամենալաւ մագաղիկներում
ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ 6—12 (Շ)

ՀԱՃՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ց Ի

ց1-ն Սեպտեմբերի 1886

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	25,893—26	15,441—07	41,334—33	1. Հիմնական դրամադրուս.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	104,230—94	230,000 —	334,230—94	2. Պահեստի դրամադրուս.....	145,031—46	— —	145,031—46
3. Զեղյուն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.....	1,608,820—30	448,464—53	2,057,284—83	3. Արդիւնք 1885 թ. ի պահեստ.....	131,233—08	— —	131,233—08
4. Զեղյուն տոկոսաբեր թղթերի, կտրոնների և այլն.....	14,910—92	125 —	15,035—92	4. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով.....	1,611,844 —	23,740 —	1,635,584 —
5. Փոխաւորութիւն գրաւականով ա) Պետութիւնից պայս. տոկոսաբ. թղթերի. բ) ոչ պայս. » » » »	1,049,001—39 200,604 — 5,840 —	51,655 — 250 — 93,804 —	1,100,656—39 200,854 — 99,644 —	բ) Գրանց. ».....	349,514 —	5,280 —	354,794 —
6. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	286,878—45	9,236—87	296,115—32	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	939,592—50	233,961—97	1,173,554—47
7. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր..	9,711—97	1,296 77	11,008—74	դ) » » պայմանաւոր.....	— —	85,132—13	85,132—13
8. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւ (Loro).....	2,884,768—56	— —	2,884,768—56	5. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւ (Loro).....	2,651,099—12	— —	2,651,099—12
բ) Բանկայի հաշիւ (Nostro).....	3,027,719—47	— —	3,027,719—47	բ) Բանկայի հաշիւ (Nostro).....	3,308,707—26	— —	3,308,707—26
9. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ.....	1,476,405—93	— —	1,476,405—93	6. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչութեան հետ կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնի հետ.....	— —	1,327,005—93	1,327,005—93
10. Բողոքուած մուրհակներ *).....	446,639—42	842,328—19	842,328—19	7. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրոնների բաշխը 1882, 1883 և 1884 թթ. ընթացիկ հաշիւներու և ալ գործողութեանց.....	575—60	— —	575—60
11. Պայմանաժամը անցուցուած փոխաւորութիւններ.....	15,000 —	— —	15,000 —	8. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և ալ գործողութեանց.....	74,645—83	3,809—40	78,455—23
12. Ընթացիկ ծախսեր.....	28,130—23	7,519—48	35,649—71	9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	106,343—71	23,048—73	129,392—44
13. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	4,074—98	3,305—22	7,380—20	10. Փոխանցիկ գումարներ.....	42,720—47	1,739—15	44,459—62
14. Յետ ստացուելիք ծախսեր.....	18,526—38	291—18	18,817—56				
Բ. Ա.	11,207,656—20	1,703,717—31	12,911,373—51	Բ. Ա.	11,207,656—20	1,703,717—31	12,911,373—51

*) Բողոքուած մուրհակներից վճանները, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է առանձին գումար..... 131,233—08